

<p align="center">ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՀ-ԲՄԱՊՁԲ-18/1-3</p>	<p align="center">CONTRACT ON COMMODITY SUPPLY FOR PUBLIC NEEDS N ՀՀՀ-ԲՄԱՊՁԲ-18/1-3</p>
<p>ք. Երևան «18» մայիսի 2018թ.</p>	<p>Yerevan «18» May 2018</p>
<p>«Հայաստանի հանրային հեռուստառնկերություն» ՓԲ ընկերությունը ի դեմս գործադիր տնօրեն՝ Մ.Գրիգորյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Hannu-pro LTD-ին, ի դեմս խորհրդի անդամ Կ. Բաումանիսի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:</p>	<p>Public Television Company of Armenia CJSC, represented by the executive director M. Grigoryan, acting on the basis of charter, hereinafter Buyer, from one side and Hannu-pro LTD represented by the board member K. Baumanis, acting on the basis of charter, hereinafter Seller, on the other side, have entered into this contract on the following:</p>
<p align="center">1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ</p>	<p align="center">1. CONTRACT SUBJECT</p>
<p>1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և CIP Երևան (Հայաստան) Incoterms 2010 պայմանով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:</p>	<p>1.1. The Seller undertakes in the order, volume and terms defined by this contract (hereinafter contract) and on the terms of CIP Yerevan (Armenia) Incoterms 2010 to supply to the Buyer the commodity provided by the Annex N 1 of the contract – Technical characteristics-procurement schedule (hereinafter commodity), while the Buyer undertakes to accept the commodity and to pay for it.</p>
<p>1.2. Ապրանքի նկատմամբ Գնորդի սեփականության իրավունքը ծագում է սույն Պայմանագրի երկկողմանի ստորագրման պահից:</p>	<p>1.2. The right to property of the Buyer towards the commodity arises from the moment of the bilateral signing of this contract.</p>
<p align="center">2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</p>	<p align="center">2. THE RIGHTS AND LIABILITIES OF THE PARTIES</p>
<p align="center">2.1 Գնորդն իրավունք ունի՝</p>	<p align="center">2.1 The Buyer is entitled:</p>
<p>2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:</p>	<p>2.1.1 To decline the commodity in case the Seller does not supply the commodity in the terms defined by the contract if the supply terms are infringed for over 5 days.</p>
<p>2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝ ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը. բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող</p>	<p>2.1.2 If the commodity delivered is of improper quality and not conforming to the technical characteristics provided by the contract: a) To demand compensation of the expenses made due to the improper quality of the commodity b) To refuse accepting the commodity, defining reasonable terms at its own discretion for the replacement of the commodity of improper quality with commodity of relevant quality without compensation</p>

<p>որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.</p> <p>գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:</p>	<p>and to demand from the Seller to pay the penalty provided by the clause 6.3 of the contract.</p> <p>c) To refuse fulfilling the contract and to demand the return of the sum paid for the commodity.</p>
<p>2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝</p> <p>ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,</p> <p>բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:</p>	<p>2.1.3 If the quantity of the commodity delivered is inferior to the one defined by the contract:</p> <p>a) To demand completing the quantity of the commodity</p> <p>b) To decline the delivered commodity and its payment, and if the payment has already been made, to demand the return of the sum and the payment of the penalty provided by the clause 6.2 of the contract.</p>
<p>2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝</p> <p>ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.</p> <p>բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.</p> <p>գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:</p>	<p>2.1.4 If the commodity delivered infringes the type condition, at its own discretion:</p> <p>a) To accept the commodity corresponding to the type condition and to decline the remaining commodities</p> <p>b) To decline all the delivered commodities and to demand the payment of the penalty provided by the clause 6.2 of the contract</p> <p>c) To demand the replacement of the commodity not corresponding to the type condition with a commodity corresponding to the type provided by the contract without compensation</p>
<p>2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:</p>	<p>2.1.5 In case the Seller infringes the supply terms, to define a new supply term for the commodity at its own discretion and to demand from the Seller to pay the penalty provided by the clause 6.2 of the contract.</p>
<p>2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:</p>	<p>2.1.6 To demand from the Seller to compensate the damages if instead of what is provided by the contract, due to the infringement of the obligation by the Seller, after the termination of the contract, the Buyer bought the commodity from another person in reasonable terms and for higher, but reasonable price, in the amount of the difference of the price defined by the contract and the price of the deal made instead of it, as well as to compensate all the necessary and reasonable expenses made for purchasing the commodity from another person.</p>
<p>2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.</p>	<p>2.1.7 To terminate the contract unilaterally (completely or partially) if the Buyer has significantly infringed the contract.</p>

<p>2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝</p> <p>ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.</p> <p>բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,</p>	<p>2.1.7.1 The infringement of the contract by the Buyer is considered significant if:</p> <p>a) The commodity delivered is of improper quality and cannot be replaced within terms acceptable by the Buyer</p> <p>b) The commodity supply terms have been infringed for over 5 days.</p>
<p>2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:</p>	<p>2.1.8 To examine the commodity and to inform the Seller of the discovered deficiencies immediately.</p>
<p>2.2 Գնորդը պարտավոր է՝</p>	<p>2.2 The Buyer is obliged:</p>
<p>2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:</p>	<p>2.2.1 To implement all the actions necessary for the acceptance of the commodity supplied in conformity with the contract.</p>
<p>2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:</p>	<p>2.2.2 In case of declining the commodity delivered by the Seller in conformity with the contract, to guarantee the responsible maintenance of the commodity and to inform the Seller immediately.</p>
<p>2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:</p>	<p>2.2.3 In case of accepting the supplied commodity in the terms and order provided by the contract, to pay the Seller the sums subject to payment, and in case of infringing the payment terms – the penalty provided by the clause 6.5 of the contract.</p>
<p>2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:</p>	<p>2.2.4 To notify the Seller on the infringement of the contract conditions on the quantity, type and quality of the commodity immediately after discovering the deficiency or in reasonable terms after the infringement of the relevant condition of the contract should have been discovered on the basis of the nature and destination of the commodity.</p>
<p>2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:</p>	<p>2.2.5 According to the clause 2.3.4 of the contract, to compensate the Seller the damages caused and substantiated in the defined order after the termination of the contract.</p>
<p>2.3 Վաճառողն իրավունք ունի՝</p>	<p>2.3 The Seller is entitled:</p>
<p>2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:</p>	<p>2.3.1 To demand from the Buyer to accept the commodity delivered in the order, volume, terms and address defined by the contract.</p>
<p>2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով,</p>	<p>2.3.2 To demand from the Buyer to pay the sums subject to payment for the commodity delivered</p>

<p>ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:</p>	<p>in the order, volume, terms and address defined by the contract and accepted by the Buyer.</p>
<p>2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:</p>	<p>2.3.4 To terminate the contract unilaterally (completely or partially) if the Buyer has significantly infringed the contract.</p>
<p>2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:</p>	<p>2.3.4.1 The infringement of the contract by the Buyer is considered significant if the payment terms have been repeatedly violated.</p>
<p>2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:</p>	<p>2.3.5 To supply the commodity prior to term with the consent of the Buyer.</p>
<p>2.4 Վաճառողը պարտավոր է՝</p>	<p>2.4 The Seller is obliged:</p>
<p>2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:</p>	<p>2.4.1 To deliver the commodity to the Buyer in the order, volume, terms and address defined by the contract.</p>
<p>2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:</p>	<p>2.4.2 To guarantee the supply of the commodity in conformity with the subclause b) of the clause 2.1.2 of this contract and/or in conformity with the clause 2.1.5 in the terms defined by the Buyer.</p>
<p>2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:</p>	<p>2.4.3 To deliver the commodity to the Buyer free of the rights of third parties.</p>
<p>2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:</p>	<p>2.4.5 To deliver the commodity to the Buyer in the quality and quantity provided by the contract, in the terms and the address provided by the contract and at the Buyer's request to provide documents defined by the RA legislation certifying the commodity quality.</p>
<p>2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:</p>	<p>2.4.6 In case of incomplete supply to complete the supply in the order provided by the contract.</p>
<p>2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:</p>	<p>2.4.7 To take back the commodity accepted for responsible maintenance by the Buyer according to the clause 2.2.2 or to manage it in reasonable terms, as well as to compensate the necessary expenses made for accepting the commodity for responsible maintenance, realizing it or returning to the Seller.</p>
<p>2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:</p>	<p>2.4.8 In the cases provided by the contract, to pay the fine and the penalty provided by the clauses 6.2 and 6.3.</p>

<p>2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:</p>	<p>2.4.9 To deliver to the Buyer the belongings and necessary documents of the commodity.</p>
<p>2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:</p>	<p>2.4.10 According to the clause 2.1.7 of the contract, after the termination of contract to compensate the Buyer the damages caused to the latter and substantiated in the defined order.</p>
<p>2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:</p>	<p>2.4.11 In case of starting a process of liquidation or bankruptcy during the process of fulfilling the contract, to inform the Buyer beforehand in writing.</p>
<p>3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ</p>	<p>3. THE PRICE AND PAYMENT ORDER OF THE CONTRACT</p>
<p>3.1 Սույն Պայմանագրի համաձայն՝ CIP Երևան (Հայաստան) Incoterms 2010 պայմանով մատակարարվող ապրանքի ընդհանուր գինը կազմում է 128 686 (մեկ հարյուր քսանութ հազար վեց հարյուր ութսունվեց) ԱՄՆ դոլար : Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:</p>	<p>3.1 The price of the commodity to be supplied under this contract on the terms of CIP Yerevan (Armenia) Incoterms 2010 is 128 686 (one hundred twenty-eight thousand six hundred eighty-six) USD The commodity supply price is stable and the Buyer is not entitled to demand increasing and the Buyer – decreasing, the price.</p>
<p>3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ԱՄՆ դոլարով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Վճարումներն իրականացվելու են պայմանագրի գործողության շրջանակներում, վաճառողի կողմից հաստատված և ներկայացված հաշիվ-ապրանքագրերի և հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:</p>	<p>3.2 The Buyer pays for the supplied commodity in USD via banking transfer of financial means to the account of the Seller. The payments shall be made within the framework of the contract validity, on the basis of invoices approved and submitted by the seller and approved acceptance acts, within 10 working days.</p>
<p>4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ</p>	<p>4. THE QUALITY AND GUARANTEE OF THE COMMODITY</p>
<p>4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:</p>	<p>4.1 The Seller guarantees the conformity of the supplied commodity to the requirements of the state standard.</p>
<p>4.2 Ապրանքի համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Ապրանքը Գնորդի պահեստ մուտքագրվելու հաջորդող օրվանից հաշված <u>1 տարի</u>: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:</p>	<p>4.2 The guarantee period of the commodity is fixed for <u>1 year</u> starting from the next day of the registration in the Buyer's store. If deficiencies of the supplied commodity are discovered during the guarantee period, the Buyer is obliged to eliminate the deficiencies at its own expense in reasonable terms defined by the Buyer.</p>

28

<p align="center">5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ</p>	<p align="center">5. DELIVERY AND ACCEPTANCE OF THE COMMODITY</p>
<p>5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:</p> <p>Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):</p>	<p>5.1 The supplied commodity is accepted by signing an acceptance act between the Buyer and the Seller. The fact of the delivery of the commodity to the Buyer is established by a bilaterally approved document between the Buyer and the Seller with the indication of the date of the document.</p> <p>Up to and including the day fixed for the commodity supply, the Seller provides the Buyer with a signed document establishing the fact of delivering the commodity to the Buyer (Annex N 3.1) and via armeps system of electronic procurement (the manual of the activity is published in the part “Electronic Procurements” of the website www.procurement.am) – the acceptance act (Annex N 3). At that, the Seller does not seal the acceptance act, but confirms it with electronic signature, filling in only the columns regarding its data (the order is published in the subpart “Order of the Minister of Finance” of the part “Legislation of the website at the address www.procurement.am).</p>
<p>5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:</p>	<p>5.2 If the supplied commodity confirms to the contract conditions, within 5 working days, starting from the working day following the day of receiving the documents indicated in the clause 5.1 of the contract, the Buyer provides the Seller with the signed acceptance act and the positive conclusion that served as a basis of its signing via armeps system.</p>
<p>5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է</p>	<p>5.3 If the supplied commodity or a part thereof does not conform to the conditions of the contract, the Buyer does not sign the acceptance act and in the terms indicated in the clause 5.2 of the contract returns to the Seller the acceptance act and the negative conclusion that served as a basis for not signing it via armeps system. In case of activating this clause, the Buyer applies the measures provided for this situation by the contract and calls the Seller to responsibility provided by the contract.</p>

22

<p>պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:</p>	
<p>5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:</p>	<p>5.4 If within the terms defined by the clause 5.2 of the contract, the Buyer does not accept the supplied commodity or does not decline its acceptance, the supplied commodity is considered accepted and the Buyer, via the system of electronic procurements, provides the Seller with the signed acceptance act the working day following the deadline defined by the clause 5.2.</p>
<p align="center">6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ</p>	<p align="center">6. THE RESPONSIBILITY OF THE PARTIES</p>
<p>6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:</p>	<p>6.1 The Seller is responsible for the quality of the delivered commodity and for maintaining the supply terms defined by the contract.</p>
<p>6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:</p>	<p>6.2 In case of infringing the supply terms of the commodity defined by the contract by the Seller, for every day overdue a penalty is charged from the Seller in the amount of 0.05 (zero point zero five) percent of the price of the commodity subject to supply, but not yet supplied.</p>
<p>6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:</p>	<p>6.3 In case of supplying commodity not conforming with the technical characteristics indicated in the clause 1.1 of the contract, the Seller pays a penalty in the amount of the 0.5 (zero point five) percent of the contract price.</p>
<p>6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:</p>	<p>6.4 The fine and penalty provided by the clauses 6.2 and 6.3 of the contract are calculated and set off with the sums subject to payment to the Seller.</p>
<p>6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:</p>	<p>6.5 In case of infringing the terms defined by the clause 3.3 of the contract by the Buyer, for every day overdue a penalty is charged from the Buyer in the amount of 0.05 (zero point zero five) percent of the sum subject to payment, but not yet paid.</p>
<p>6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:</p>	<p>6.6 In case of non-fulfillment or improper fulfillment of the obligations in cases not defined by the contract, the parties bear responsibility in the order defined by the RA legislation</p>





27

<p align="center">7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)</p>	<p align="center">7. FORCE MAJEURE</p>
<p>Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:</p>	<p>The parties are freed of responsibility for complete or partial non-fulfillment of the contract if it is a consequence of force majeure arisen after signing this contract, which the parties could not have foreseen or prevented. Such situations are earthquake, flood, fire, war, declaration of military and emergency state, political unrest, strikes, interruption of the work of communication means, public body acts, etc., which render the fulfillment of obligations under this contract impossible. If force majeure lasts over 3 (three) months, then each of the parties is entitled to terminate the contract, informing the other party beforehand.</p>
<p align="center">8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ</p>	<p align="center">8. OTHER CONDITIONS</p>
<p>8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:</p>	<p>8.1 The contract enters into force from the moment of its signing by the parties and remains valid until the complete fulfillment of the obligations assumed under the contract by the parties.</p>
<p>8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:</p>	<p>8.2 The payment obligation arisen from the contract cannot be stopped by a setoff of a contrary obligation arisen from another contract. The requirement right arisen from the contract cannot be transferred to another person without the written agreement of the debtor.</p>
<p>8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը,</p>	<p>8.3 If in the result of control or supervision over the fulfillment of the law requirements in the order defined by the law or in the result of the complaint study it is revealed that in the procurement process organized for the purpose of concluding the contract before the conclusion of the contract the Buyer submitted false documents (information and data) or the decision of declaring the latter a chosen participant does not conform to the legislation of the Republic of Armenia, then after the discovery, the Buyer is entitled to terminate the contract unilaterally if the registered infringements would have served as a basis for not concluding the contract according to the legislation of the Republic of Armenia on procurements</p>

<p>եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:</p>	<p>were they known before the conclusion of the contract. At that, the Buyer does not bear the risk of damages or lost benefit caused to the Seller in the result of the unilateral termination of the contract, while in the order defined by the law of the Republic of Armenia the latter is obliged to compensate the damages caused to the Buyer in the volume of the basis for contract termination.</p>
<p>8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:</p>	<p>8.4 The disputes concerning the contract are subject to examination in the courts of the Republic of Armenia.</p>
<p>8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:</p> <p>Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:</p> <p>Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:</p>	<p>8.5 The contract can be modified or amended only by mutual consent of the parties through signing an agreement, which will be considered the inalienable part of this contract.</p> <p>In the contract and, if the contract has factor price, in the agreement attached to the contract signed during the following years, it is forbidden to make such modifications that lead to artificial change of the volumes of the commodity or the unit price of the commodity or the contract price.</p> <p>Every modification case of the contract under the influence of factors regardless of the parties of the contract is defined by the Government of the Republic of Armenia.</p>
<p>8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:</p>	<p>8.6 The commodity supply term may be extended before the deadline by the Buyer's suggestion, provided that the requirement of the commodity use is still existent. At that, in the case defined by this clause, the commodity supply term may be extended once by up to 30 calendar days, but not more than the term defined by the contract.</p>
